ՀԱՅԿԱԿԱՆ ԶՈՐՔԸ ԱՐՏԱՇԵՍՅԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Ս. Մ. ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ

Հայկական զորքի և նրա ինքնուրույն ռազմական գործողությունների մասին համեմատաբար ավելի հավաստի տվյալներ ունենք Տիգրան Բ-ի թագավորության ժամանակաշրջանի վերաբերյալ, որոնք մեզ հասել են անտիկ հեղինակների և Մովսես Խորենացու միջոցով։

Ճիշտ է, պատմահայրը հայկական պետական հաստատությունների ու հայկական բանակի կազմակերպումը վերագրում է հայոց կիսապատմական թագավոր Վաղարշակ Արշակունուն[1], այնուամենայնիվ կասկածից վեր է, որ Տիգրան Բ-ը մեծ վերափոխություններ ձեռնարկեց հայկական բանակի վերակազմության ուղղությամբ, այն բարձրացնելու համար իր ժամանակի առումով պրոֆեսիոնալ աստիճանի։ Հաջորդած դեպքերի ամբողջ ընթացքը ցույց է տալիս, որ այդ բանը նրան մասամբ հաջողվում է։ Տիգրան Բ-ի կատարած ռազմական վերափոխությունների ամենամերձավոր հետևանքը պիտի համարել կարճ ժամանակում նրա տերության սահմանների ոչ միայն վերականգնումը, այլև դրանց աննախընթաց ընդարձակումը Կովկասյան լեռներից մինչև Կիլիկիա ու Պաղեստին։ Տիգրան Մեծի ռազմական այդ վերափոխությունների էության մասին որոշ պատկերացում կարելի է կազմել Մովսես Խորենացու այն վկայությունից, թե այդ ժամանակ «հեծեալամարտքն ի վերայ ուսոց ձիոց բերեալք, և պարսաւորքն առ հասարակ ոտիպաղեզունք, և շերտաւորքն ի սուսեր և ի տէգ նիզակի վառեալք. մերկքն վահանօք և դդեստուք երկաթօք պարուծածկեալք։ Որոց ի մի վայր հասելոց բաւական էր տեսիլն միայն, և որ ի նոցայն պահպանակաց և զինուց փայլմունք և շողինք՝ ոթշնամիսն արտահալածել»[2].

Տիգրան Բ-ի բանակի և նրա մղած ռազմական գործողությունների մասին անտիկ հեղինակների մեզ հասած տեղեկությունների ուսումնասիրությունից պարզվում է, որ Արևելքի մյուս երկրների նման, Հայաստանում ևս գլխավոր հրամանատարը ինքը՝ թագավորն էր։ Սակայն, ոչ բոլոր արշավանքների ժամանակ էր հայոց թագավորն առաջնորդում իր զորքին։

Հետևենք սկզբնաղբյուրների վկայություններին։ Ապիանոսը հաղորդում է, որ Տիգրանի զորավարներից Միթրասը և Բագոասը ուղարկվեցին Կապադովկիան նվաճելու[3]։ Մեկ այլ առիթով նույն Ապիանոսը խոսում է Տիգրանի Բագադատես (Μαγαδάτης = Βαγαδάτης) զորավարի մասին[4]։ Հավանաբար այս Բագադատեսն է Տիգրանի կողմից, զորքի մի մասով, ուղարկվել նվաճելու Կոմագենեի թագավորությունը և Դաշտային Կիլիկիան, մինչ ինքը՝ հա-

---

[1] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, Բ, գ։

[2] Նույն տեղում, Ա, իգ։

[3] Appiani, Mithridatica, 19.

[4] Նույն տեղում, 48։

յոց թագավորը, դբաղված էր Փյունիկիայի վրա արշավելով։ Այնուհետև, այս Բաղադատեսն էր, որ 69 թ., Լուկուլլոսի արշավանքի ժամանակ, իր զորքով Կիլիկիայից օգնության շտապեց անակնկալ հարձակման ենթարկված Տիգրանին։

Տիգրան Բ-ի մեկ այլ զորապետի՝ Մեհրուժանի (Μιθροβουζάνης) մասին, որը Մեծ Հայքին միացված Ծոփքի թագավորական գերդաստանից էր, հանդամանալից խոսում են Պլուտարքոսն ու Ապիանոսը։ Անակնկալի եկած հայոց թագավորը սրան 2000 հեծելազորով ուղարկում է Լուկուլլոսի դեմ՝ հռոմեական լեգեոնների առաջխաղացումը կանգնեցնելու համար։ Տեղի ունեցած կատաղի ճակատամարտում Մեհրուժանն ընկնում է քաջաբար[5]։ Մեհրուժանի հրամանատարությանը հանձնված այս հեծելազորի, ինչպես նաև Հայաստանի նախկին սյուզերեն Սելևկյան թագավորի արքունի հեծելազորի մասին սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկությունների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս որոշ չափով պարզելու Մեհրուժանի պաշտոնի և նրա ղեկավարած հեծելազորի էությունը։

Սելևկյանների իշխանության կարևորագույն հենարանը նրանց, ճիշտ է, խայտաբղետ, բայց պատերազմի ժամանակ պատկառելի ուժ ներկայացնող բանակն էր։ Այդ բանակի կազմի մասին որոշ պատկերացում են տալիս 216 թ. Իսֆիայում և 190 թ. Մագնեսիայում տեղի ունեցած պատերազմների նկարագրությունները, որ թողել են Պոլիբիոսը, Ապիանոսը և Տիտոս Լիվիոսը[6]։

Այդ նկարագրությունների հիման վրա ուսումնասիրողները եզրակացրել են, որ Սելևկյանների հսկայական բանակը հիմնականում կազմված է եղել հետևակներից և հեծյալներից[7]։ Հետևակների ամենակարևոր մասը հայտնի մակեդոնական ֆալանգան էր, որտեղ գլխավոր հարվածային ուժը կազմում էր պեզետայրոյ (πεζεταῖροι = հետևակ ընկերներ) կոչված գունդը։ Այս գունդը, որ գոյություն ուներ դեռևս Փիլիպոս Բ-ի և Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակ և բաղկացած էր 6000 ծանրազեն հետևակներից, հանդիսանում էր թագավորի թիկնապահ զորքը։

Հետևակի շարքերում, բացի ծանրազեն հոպլիտներից, կային նաև թեթևազեն աղեղնավորներ և պարսատիկավորներ (τοξόται καὶ σφενδονῆται)[8]։

Եթե Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներին մասնակցած հետևակը հիմնականում կազմված էր մակեդոնացի ծանրազեն ֆալանգիտներից, ապա Սելևկյանների ժամանակ մակեդոնական ֆալանգայի կողքին կարևոր տեղ էին գրավում նաև հույն և բարբարոս (ոչ հույն) վարձկանների, ինչպես և Սելևկյաններին հպատակ երկրներից հավաքագրվածների գնդերը։

Սելևկյանների հեծելազորը ևս, հետևակի նման, բաղկացած էր բուն մակեդոնացիներից, որը կոչվում էր ագեմա (τὸ λεγόμενον ἄγημα τῶν Μακεδόνων)[9] և տեղաբնիկ, արևելյան ժողովուրդներից, քանի որ Ապիանոսի համաոյստասխան վկայության մեջ, մակեդոնացիների կողքին, հիշատակ-

---

[5] Plutarchi, Lucullus, XXV, 3—6, Appiani, Mithrid., 84.

[6] Polybii Historiae, V, 79, Appiani Syriaca, 32, Titus Livius, XXXVII, 40.

[7] E. Bickerman, Institutions des Séleucides, Paris, 1938, էջ 52—60։

[8] Polyb., V, 53,9, նաև՝ 79,6 և XVI, 18,7։

[9] Appiani, Syriaca, XXXII. Տիտոս Լիվիոսը սխալմամբ այդ ագեման համարում է Մեղական (Titus Livius, 40,6.

ված են հեծյալ աղեղնավորներ դայերից, միսիացիներից և էլիմայեցիներից (ἱπποτοξόται Δάαι καὶ Μυσοὶ καὶ Ἐλυμαῖοι), ինչպես նաև՝ ծանրազեն հեծյալ գալաաներ (Γαλάται κατάφρακτοι)[10]։ Պոլիբիոսը ևս, Սելևկյանների կորքը նկարագրելիս, հիշատակում է նիսայական ծանրազեն հեծելազորի մասին[11]։ Ապիանոսը նույն տեղում հիշատակում է նաև δρομάδες (դրոմադես-վազողներ) կոչված գունդը, որը, ամենայն հավանականությամբ, կազմում էին անապատի արաբներն իրենց ուղտերով։

Բացի հեծելազորի մի գնդից, որի մասին կխոսվի ստորև, ինչպես նաև տարբեր բերդերում տեղակայված կայազորներից, Սելևկյանների այս ամբողջ բանակը, ըստ երևույթին, մշտական չէր, այլ հավաքագրվում էր պատերազմների ժամանակ։ Հայոց թագավորը ևս, Սելևկյանների նման, չի ունեցել մշտական բանակ։ Ս. Տ. Երեմյանը այդ առթիվ իրավացիորեն նշում է, որ «հելլենիստական մյուս միապետությունների նման, Հայաստանում ևս չկային մշտական խոշոր բանակներ։ Պատերազմի ավարտից հետո հայ թագավորները արձակում էին դրանք։ Սակայն այս պրակտիկան կապված էր խոշոր անպատեհությունների հետ, քանի որ նոր պատերազմի դեպքում հարկ էր լինում կրկին հավաքագրել։ Այդ պատճառով թագավորը իր մոտ պահում էր հեծելազորի մի մասը»[12]։

Սելևկյանների մշտական բանակը հիմնականում ցրված էր տերության տարբեր պրովինցիաներում որպես կայազորներ և տեղավորված էր բերդերում (φρούραι)։ Այդպիսի բերդեր հայտնի են Սարդեսում, Եփեսոսում, Սուսայում, Երուսաղեմում, Գուրա-Եվրոպոսում և այլուր։ Բերդի կայազորը գտնվում էր բերդապահի (φρούραρχος) հրամանատարության ներքո[13]։ Բերդապահն աղբյուրներում հաճախ կոչվում է նաև ἀκροφύλαξ[14] կամ ἔπαρχος=praefectus[15]։

Հելլենիստական թագավորների կայազորները հաճախ տեղակայված էին լինում ոչ միայն բերդերում և ամրոցներում, այլև թագավորին ենթակա քաղաքներում։ Քաղաքներին ուղղված հելլենիստական թագավորների նամակներում հանդիպող ἐπισταθμεύειν[16] (տեղավորված լինել օթևաններում) և ἀνεπίσταθμος[17] (օթևան տրամադրելու պարտավորություններից ազատ) բառերը, ինչպես նաև Պոլիբիոսի ուշագրավ մի վկայությունը[18] դրա ամենահավաստի ապացույցն են։ Հունական քաղաքներում կայազորներ (φρουραί) տեղավորելու պրակտիկան գոյություն է ունեցել դեռևս Ալեքսանդր Մակե-

---

10 Appiani, Syriaca, XXXII.

11 Polyb, XXXI, 3, 6։

12 С. Т. Еремян, Основные черты общественного строя Армении в эллинистический период (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1948, № 11, էջ 56)։

13 Polyb., 44. 1:Jos. Flavii. Iud. Antiq., XIII 388։

14 Polyb., V, 50, 10։

15 «Աստուածաշունչ», Բ Մակկաբեաց, Դ, իվ։

16 C. B. Welles. Royal correspondence in the hellenistic period, New Hawen, 1934, 30, 7։

17 Նույն տեղում, 70, 13։

18 Պոլիբիոսի պատմելով, Թասոսի բնակիչները հաղորդում են Մակեդոնիայի թագավոր Փիլիպոս Ե-ին, որ քաղաքը կհանձնեն, եթե իրենց ազատի «կայազորից, հարկերից, օթևան տրամադրելու պարտավորությունից և թույլատրի ապրել սեփական օրենքներով» (Polyb., XV, 24, 2)։

գոնացու ժամանակ և ամեն մի քաղաքային համայնք պարտավոր էր իր միջոցներով հոգալ կայազորի կարիքները[19]։ Դրանով մի կողմից թագավորի տրամադրության տակ լինում էր որոշ քանակությամբ մշտական զորք, մյուս կողմից՝ սահմանափակվում էր քաղաքի ինքնավարությունը և ուժեղանում նրա ենթակայությունը թագավորական իշխանությանը։

Անկասկած, Սելևկյանների մշտական բանակի մասն էին կազմում նաև աղբյուրներում հիշատակված թիկնապահները՝ (ὑπασπισταί) իրենց հրամանատարով (ἡγεμὼν τῶν ὑπασπιστῶν)[20]։

Սելևկյանների այս խայտաբղետ բանակում, սակայն, սմենակարևոր դերը պետք է խաղար հեծելազորային այն գունդը, որը հայտնի է ադեմա (ἀγήμα)[21] կամ այրունի հեծելագունդ (βασιλικὴ ἴλη)[22] անունով։

Տիգրան Բ-ի բանակի մասին խոսելիս, մենք անհրաժեշտ համարեցինք համառոտակի ուրվագծել Սելևկյանների բանակի կազմակերպական պատկերը, քանի որ, մեր կարծիքով, հելլենիստական այդ խոշորագույն պետության բանակը (ինչպես նաև հարևան հելլենիստական ավելի փոքր միապետությունների բանակները) այն հիմնական սկզբնաղբյուրն էր, որին հետևեց հայոց թագավորն իր զորքը կազմակերպելիս։ Հետևաբար, Տիգրանի բանակը ևս հռոմեականի նկատմամբ պետք է ունենար նույն թերությունները, ինչ Սելևկյաններինը, որի հետևանքով էլ, Անտիոքոս Գ-ի նման, Տիգրանը ևս պարտվեց հռոմայեցիների դեմ բաց դաշտում մղած առաջին ճակատամարտում։

Հայաստանում նույնպես բանակի գլխավոր հարվածային կորիզը թագավորի թիկնապահ հեծելազորն էր։ Հայոց թագավորներ Տիգրանի, Արտավազդի և Արշակունի Տրդատ Ա-ի թիկնապահ հեծելազորի մասին մեզ հասել են անտիկ հեղինակների մի շարք հետաքրքիր հիշատակություններ, որոնք մեջ ենք բերում բնագրից՝ թարգմանաբար.

«Առաջինը նրա (Տիգրանի—Ս. Կ.) ընկերներից (τῶν φίλων) Մեհրուժանը համարձակվեց ճշմարտությունը հաղորդել...։ Սա իսկույն ուղարկվեց Լուկուլլոսի դեմ 3000 հեծելազորով և բազմաթիվ հետևակով»[23]։

«Տիգրանը.... Մեհրուժանին ուղարկեց 2000 հեծյալներով, որպեսզի խափանի Լուկուլլոսի ճանապարհը»[24]։

«Իսկ Տիգրան թագավորը.... վերցնելով իր ընկերներին ու ազգականներին, գնաց, որպեսզի անձնատուր լինի Պոմպեոսին»[25]։

«Նրան (Կրասոսին—Ս. Կ.) սրտապնդեց հատկապես Արտավազդ Արմենի ժամանումը։ Սա եկավ ճամբար 6000 հեծելազորով։ Իսկ սրանք, ինչպես ասում էին, միմիայն թագավորի թիկնապահներն էին և ուղեկիցները։ Նա (Արտավազդը—Ս. Կ.) խոստանում էր, որ կտա տասը հազար այլ զրահապատ հեծելազոր և երեք հազար հետևակ...»[26]։

---

[19] W. Dittenberger, Sylloge Inscriptionem Graecarum, ed. 3, Lipsiae, 1915—1924, 3, 283.

[20] Polyb., VII, 16, 2, Polyaeni, Strategematicon, IV, 9, 3.

[21] Polyb., XXXI, 3, 7, Appiani, Syriaca, XXXII.

[22] Polyb., V, 85, 12, Polyaeni, Strategematicon, IV, 9, 6.

[23] Plut., Lucull., XXV, 8.

[24] Appiani Mithrid., 84.

[25] Plutarchi Pompeius, XXXIII, 1.

[26] Plutarchi Crassus, XIX, 1—2.

Մի վկայություն էլ կա Տրդատ Ա-ի թիկնապահ հեծելազորի մասին։ Հանդեսայի մոտ հայ-պարթևական միացյալ զորքերից կրած ծանր պարտությունից հետո Հռոմը հարկադրված եղավ համաձայնվել, որ Տրդատ Արշակունին մեկնի Հռոմ և այնտեղ Ներոն կայսեր ձեռքից ստանա Հայաստանի թագը։ Տրդատի Հռոմ կատարած ճանապարհորդությունը և այնտեղ նրան ցույց տրված շքեղ ընդունելությունը մանրամասն նկարագրել է Դիոն Կասիոսը։ Տակիտոսը և Պլինիոս Ավագը ևս որոշ մանրամասներ են հաղորդում Տրդատի այցելության մասին։ Նրանց վկայությամբ, Տրդատն ուղևորվելիս իր հետ վերցրել էր կնոջը և երեխաներին, իր եղբայրներ՝ Ատրպատականի թագավոր Բակուրի և Ադիաբենեի թագավոր Մոնոբազոսի որդիներին։ Հայոց թագավորին ուղեկցում էր 3000 հայ ու պարթև հեծյալներից բաղկացած մի շքախումբ[27]։

Վերոհիշյալ վկայություններում հիշատակված հայոց թագավորի թիկնապահ հեծելագունդը, անկասկած, համապատասխանում էր Սելևկյանների մակեդոնական ագեմային, որի մասին արդեն ասվեց։ Հայկական այդ հեծելագունդը, իր սոցիալական կազմով, նման պետք է լիներ ագեմային։ Ինչպես հայտնի է, մակեդոնական ագեման բաղկացած էր Սելևկյան թագավորի ընկերներից և մերձավոր բարեկամներից (ἑταῖροι, φίλοι, σύν-βωμοι), որոնցից էլ, սովորաբար, նշանակվում էին պալատական և այլ պաշտոնյաները։ Պլուտարքոսի, Ապիանոսի, ինչպես և մյուս հեղինակների վկայություններից հետևում է, որ հայկական թիկնապահ հեծելագունդը ևս կազմված էր թագավորի բարեկամներից և ընկերներից։ Ելնելով դրանից, պիտի ենթադրել, որ հայոց թագավորի թիկնապահ գնդի և նրա հրամանատարի դերը երկրի քաղաքական կյանքում նույնքան կարևոր էր, ինչքան Սելևկյան պետությունում։

Այդ փաստը արձանագրված է հետագա դարերի հայ մատենագրության մեջ։ Մովսես Խորենացին, օրինակ, պատմելով Վաղարշակ թագավորի կողմից Հայաստանում արքունի գործակալությունների՝ նախարարությունների հաստատման մասին, վկայում է, որ թագավորը նշանակում է «թիկնապահս իւր, զինու հանդերձ, ի զաւակացն Խոռայ Հայկազնոյ, արս ընտիրս և քաջս, նիզակաւորս և սուսերաւորս, և գլուխ նահապետութեան նոցա զՄաղխազ ոմն այր բարի և սրտեայ»[28]։ Ինչպես հետևում է պատմահոր այս վկայությունից, մաղխազը գլխավորում էր արքունի թիկնապահների գունդը և նրա վարած պաշտոնը կոչվում էր «մաղխազություն», որը հին Հայաստանում կարևորագույն վեց գործակալություններից (թագակալ ասպետություն, հազարապետություն, մարդպետություն, մաղխազություն, սպարապետություն և մեծ դատավորություն) մեկն էր։ Ըստ Ն. Ադոնցի, «մաղխազ» նշանակում է տեր, իշխան, թագավոր[29]։

Մենք արդեն նշել ենք, որ Տիգրանի թիկնապահ հեծելազնդի հրամանատար Մեհրուժանը Տոմքի թագավորական տոհմից էր։ Այդ հանգամանքը, ինչպես նաև «մաղխազ» անվան Ն. Ադոնցի տված բացատրությունը միանգամայն պարզ են դարձնում, որ բարձր ազնվականությունից սերած այդ պաշ-

---

[27] Cassius Dio, LXIII, 1—7; Taciti, Annales, XVI, 24, C. Plinii Naturalis Historiae, XXX, 16, XXXIII, 54.

[28] Մովսես Խորենացի, Բ, է։

[29] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, стр. 400.

տոնյան շատ մոտ կանգնած լինելով արքունիքին, նշանակալից դեր պետք է խաղար Հայաստանի քաղաքական կյանքում։

Սելևկյանների մակեդոնական ագեմայի և հայոց թագավորի թիկնապահ հեծելագնդի ոչ միայն սոցիալական դերն ու դիրքն էր համընկնում համապատասխան երկրների հասարակական-քաղաքական կյանքում, այլև դրանք համարյա համընկնում են նաև քանակապես։

Ինչպես տեսանք, Պոլիբիոսի և Ապիանոսի վկայություններում Սելևկյանների ագեման բաղկացած էր 2000 հեծյալներից։ Վերևում բերված տվյալների համաձայն, հայոց թագավորի թիկնապահ հեծելագունդը հաշվվում էր 2000, 3000, 6000 և 3000։ Առաջին հայացքից թվում է, թե այդ գնդի թիվը Հայաստանում տարբեր ժամանակներում տատանվել է 2000—6000-ի միջև։ Սակայն այդ տվյալների մանրակրկիտ վերլուծությունը թույլ է տալիս ասելու, որ հայկական թիկնապահ գունդը ևս, Սելևկյան ագեմայի նման, բաղկացած է եղել շուրջ 2000 հեծյալներից։ Ինչպես նկատեցինք, Ապիանոսը հաղորդում է, որ Տիգրանը Մեհրուժանին 2000-անոց հեծելազորով ուղարկեց Լուկուլլոսի դեմ։ Նրա հաղորդած այս թիվը պետք է համարել միակ ճիշտը։

Պլուտարքոսը, նկարագրելով նույն դեպքերը, նշում է, որ Տիգրանը Մեհրուժանին Լուկուլլոսի դեմ ուղարկեց 3000 հեծյալներով և բազմաթիվ հետևակով։ Տիգրան Բ-ի պատմությանը վերաբերող Պլուտարքոսի մի շարք վկայություններ Հ. Մանանդյանը հիրավի համարում է միտումնավոր ու չափազանցված։ Մենք հակված ենք ենթադրելու, որ Մեհրուժանին հանձնված հեծելազորի թվի և հետևակի մասին Պլուտարքոսի այս հաղորդումը ևս վստահելի չէ։ Դեռ Հ. Մանանդյանն իր ժամանակին մատնացույց է արել, որ Պլուտարքոսը իր իդեալականացրած հերոսի՝ Լուկուլլոսի հաղթանակն ընդգծելու նպատակով, մեծացրել է Տիգրանի զորքերի թիվը[30]։ Անհավանական պիտի համարել նաև Պլուտարքոսի հաղորդման այն մասը, որ իբր հեծելազորից բացի, Մեհրուժանին հանձնվել էր նաև հետևակ զորք, այն էլ «բազմաթիվ»։ Ինչպես ճիշտ նշում է Հ. Մանանդյանը[31], Լուկուլլոսի արշավանքը հանկարծակիի էր բերել Տիգրանին։ Հետևաբար, հայոց թագավորը պատրաստ չէր պատերազմի և չէր կարող այդ ժամանակ Տիգրանակերտում իր տրամադրության տակ ունենալ «բազմաթիվ հետևակ»։

Ինչ վերաբերում է մ. թ. ա. 54 թ. Կրասոսի բանակատեղին Արտավազդի գալու մասին Պլուտարքոսի հաղորդմանը, որի համաձայն հայոց թագավորը ժամանել էր 6000 թիկնապահներով, ապա, կարծում ենք, որ այն ոչ լիովին է համապատասխանում պատմական իրականությանը։ Կասկած չի կարող լինել, որ մինչև Ասորիք, որտեղ բանակ էր դրել պարթևների դեմ արշավանքի պատրաստվող Կրասոսը, ճանապարհվող հայոց թագավորին պետք է որ ուղեկցեր 2000 հեծյալներից բաղկացած նրա թիկնապահ հեծելագունդը, Արտավազդը, անտարակույս, խրատված իր հոր՝ Տիգրան Բ-ի ճակատագրական սխալից, որը չէր կանխատեսել նենգ Լուկուլլոսի անակնկալ արշավանքը, ռազմական անհրաժեշտ պատրաստություն էր տեսել, հավաքելով բավականաչափ զորք, հարկ եղած դեպքում դիմագրավելու և՛ հռոմայեցիների, և՛

---

30 Հ. Հ. Մանանդյան, Տիգրան երկրորդը և Հռոմը, Երևան, 1940, էջ 116—120։

31 Նույն տեղում, էջ 93—103, Ս. Մ. Կրկյաշարյան, Տիգրան Բ-ին վերաբերող մի կարևոր ուղղում («Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4, էջ 275—278)։

պարթևների հավանական հարձակումները։ Հետևաբար, և՛ անձնական ապահովության (նրա ճանապարհի զգալի մասն անցնում էր օտար երկրի տարածքով), և՛ իր ուժը ցուցադրելու համար, նա, բացի իր թիկնապահ հեծելազնդից, որի թիվը պետք է լիներ շուրջ 2000, իր հետ վերցրել էր նաև մի քանի հազար այլ հեծյալների, որով նրան ուղեկցող զորքի ընդհանուր թիվը հասել էր 6000-ի։ Իսկ հռոմայեցիներն այդ պատկառելի բանակն ամբողջությամբ ընդունել էին որպես թագավորի թիկնապահ զորք։

Այժմ մի քանի խոսքով անդրադառնանք Ներոնի ձեռքից Հայաստանի թագն ստանալու համար Հռոմ ուղևորված Տրդատ Արշակունուն ուղեկցող երեք հազարանոց հեծյալ շքախմբին։ Ակներև է, որ այն եղել է խայտաբղետ։ Սակայն այդ շքախմբի հիմնական կորիզը, անկասկած, թագավորի 2000-անոց թիկնապահ հեծելագունդն էր։ Շքախմբի թիվը հասել էր 3000-ի հավանաբար այն բանից հետո, երբ թագավորական հեծելազնդին միացել էին Ատրպատականի և Ադիաբենեի թագաժառանգներին ուղեկցողները, ինչպես նաև՝ պարթև Վաղարշ Ա-ի Հռոմ ուղարկած պատգամավորները։

Խորենացու այն եզակի հաղորդումը, թե Արտաշեսը հայկական զորքերը չորս մասի բաժանեց և դրանք, համապատասխանաբար, հաստատեց աշխարհագրական չորս ուղղություններով[32], հնարավորություն է տալիս ենթադրելու, որ Արտաշեսյանների ժամանակ Հայաստանում ստեղծված են եղել հատուկ սահմանապահ զորամասեր, որոնց պարտականությունն էր՝ երկրի սահմանները պաշտպանել արտաքին հարձակումներից։ Մեր կարծիքով, այս հիմքի վրա է, որ հետագայում, Արշակունիների օրով, Հայաստանում ստեղծվում են «կողմնակալ» իշխանություններ, որոնք գալիս են փոխարինելու նախկին բդեշխություններին։

Պատերազմի ժամանակ հայոց թագավորը հավաքում էր մեծ քանակությամբ հետևակ զորք, որի թիվը, ըստ մոտավոր հաշվումների, կարող էր հասնել 100 հազարի։ Մեր խոսքը, անշուշտ, վերաբերում է ոչ թե Տիգրան Բ-ի նվաճումներից հետո առաջացած ընդարձակածավալ և էթնիկապես խայտաբղետ տերությունից, այլ, ընդհանրապես, Մեծ Հայքից հավաքագրվող զորքերի քանակին[33]։

Արտաշեսյանների ժամանակ հայոց թագավորը հեծյալ թիկնապահ գընդից և մեծաթիվ հետևակից բացի, ուներ նաև պատկառելի թվով հեծյալ զորաբանակ։ Թեև սկզբնաղբյուրներում հայկական հեծելազորի ամբողջ թվի մասին հիշատակություն չկա, սակայն այլ տվյալներով հնարավոր է որոշել դրա մոտավոր քանակը։ Այսպես՝ Պլուտարքոսը հաղորդում է, թե Արտավազդը, գալով Կրասոսի մոտ, խոստացավ նրան տրամադրել «10 հազար զրահապատ հեծելազոր և 30 հազար հետևազոր»[34]։ Ենթադրելով, որ Արտավազդը, իբրև «Հռոմի դաշնակից ու բարեկամ», Կրասոսին օգնելու համար կտրամադրեր ոչ թե իր ամբողջ զորքը, այլ, լավագույն դեպքում, դրա կեսը, կարելի է ասել, որ նրա զրահապատ հեծելազորի թիվը (բացի թիկնապահներից) հասնում էր 20 հազարի։

---

32 Մովսես Խորենացի, Բ, իգ։

33 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Երևան, 1971, էջ 686—688։

34 Plut., Crassus, 19. 1—4.

Բացի հիմնական հեծյալ և հետևակ զորքերից, հայկական բանակում կային նաև օժանդակ զորամասեր, որոնց մասին վկայություններ են մնացել Ստրաբոնի, Պլուտարքոսի և այլոց մոտ։ Այսպես՝ Ստրաբոնը, խոսելով Տիգրանին հպատակ կորգվացիների մասին, նշում է, որ «նրանք համարվում էին աչքի ընկնող ճարտարապետներ և պաշարողական գործերի մեջ փորձառու։ Դրա համար էլ Տիգրանը նրանց օգտագործում էր այդպիսի գործերում»[35]։ Պլուտարքոսը, նկարագրելով Տիգրանակերտի ճակատամարտը, խոսում է Տիգրանի բանակում եղած սակրավորների զորամասերի, ինչպես նաև մեծաքանակ դումակի մասին[36], որը և այդ ճակատամարտում դառնում է Տիգրանի պարտության հիմնական պատճառը։

Ինչպես նկատեցինք, աղբյուրներում տարբեր առիթներով հիշատակվում են Տիգրան Բ-ի զորքի հրամանատարների անունները։ Դա վկայում է, որ ո՛չ Արտաշեսի, ո՛չ իսկ Տիգրանի ժամանակ դեռևս գոյություն չուներ հայոց սպարապետի ժառանգական պաշտոնը և սպարապետությունը չէր կազմավորվել որպես նախարարություն։ Այն կազմավորվեց հետագայում, Արշակունիների թագավորության ժամանակ, երբ Հայաստանում պետական բոլոր պաշտոնները, որպես արքունի գործակալություններ, ժառանգաբար շնորհվեցին այս կամ այն նախարարական ընտանիքի ավագ ներկայացուցչին։

Ասացինք, որ Տիգրան Բ-ի (ինչպես և նրա հաջորդների) ժամանակ արդեն կազմակերպվել էր արքունի թիկնապահ հեծելազորը և այդ գնդի հրամանատարն էր Մեհրուժանը։ Այս կարևոր պաշտոնը ևս այդ ժամանակ չէր կարող ժառանգական լինել, քանի որ հիշյալ Մեհրուժանը Ծոփքի թագավորական գերդաստանից էր[37], որը տակավին նոր էր միացվել Տիգրանի թագավորությանը և, հավանաբար, Ծոփքի արքունիքի ներկայացուցիչներին սիրաշահելու համար հայոց թագավորը արքունի գերդաստանին զանազան պաշտոններ էր տալիս։

Վերևում ասվեց, որ Սելևկյանների մշտական բանակը հիմնականում ցրված էր տերության տարբեր մասերում որպես կայազորներ, տեղակայված բերդերում։ Հավանաբար, Հայաստանում ևս հայոց թագավորի զորախմբերը ցրված են եղել երկրի բերդերում և ամրոցներում։ Դրանցից նշանավորը Տոմիսա բերդն էր՝ Եփրատի ձախ ափին, Կապադովկիայի և Ծոփքի սահմանի վրա։ Ստրաբոնը այն տեղադրում է Ծոփաց աշխարհում[38]։ Տոմիսան ոչ միայն հայտնի ամրություն էր, այլև գտնվելով պարսկական հին «արքունի ճանապարհի» վրա, միաժամանակ Հայաստանի վրայով Բաբելոնիա կամ Փոքր Ասիա գնացող կարավանների հայտնի կայան էր[39]։ Հաշվի առնելով այս վերջին հանգամանքը, պիտի ենթադրել, որ այդ ամրոցում տեղակայված բերդապահ զորքը պարտավոր էր ապահովել Տոմիսայի վրայով անցնող կարավանային ուղիների անվտանգությունը։

---

35 Strabo, XVI, I, 24,

36 Plut., Lucull, 26—27.

37 J. Markwart, Eranschahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i Berlin, 1901, էջ 176, Հ. Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 103։

38 Strabo, XII, 2, 1 և XIV, 2, 29.

39 Հ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 1, 1944, էջ 111։

Արտաշատ մայրաքաղաքի մասին խոսելուց հետո, Ստրաբոնը թվարկում է Հայաստանի մի շարք բերդերի անուններ, որոնք միաժամանակ եղել են հայոց թագավորի գանձատները։ «Քաղաքից (Արտաշատից—Ս. Կ.) ոչ շատ հեռու,— գրում է Ստրաբոնը,— գտնվում էին Տիգրանի և Արտավազդի գանձատները, Բաբյուրս և Օլանե անառիկ ամրոցները։ Ուրիշներ ևս կային Եփրատի վրա։ Արտագեյրան ապստամբեց բերդապետ Ագոնի գլխավորությամբ։ Կեսարի զորավարները գրավեցին այն, երկար ժամանակ պաշարելուց հետո և պարիսպները քանդեցին»[40]։ Այս վերջին դեպքի մասին Դիոն Կասսիոսի մոտ եղած հիշատակության համաձայն, Արտագեյրա ամրոցը ևս եղել է հայոց թագավորի գանձատներից մեկը[41]։

Բերդերն ու ամրոցները որպես ապահով գանձատներ օգտագործել են ոչ միայն հայոց թագավորները, այլև հարևան հելլենիստական միապետները։ Ստրաբոնը գրում է, որ «Միհրդատ Եվպատորը... հոգ տարավ այս երկրների մասին և կառուցեց այնտեղ 75 ամրոց, պահելու համար իր գանձերի մեծագույն մասը։ Սրանցից առավել հիշարժան են Հյուդարան, Բասդոյդարիզան և Սինորիան»[42]։

Կասկած չի կարող լինել, որ Հայաստանի ամենահայտնի բերդերից է եղել Արտաշատ մայրաքաղաքը հյուսիսից պաշտպանող Գառնի ամրոցը, որը ամբողջ I դարում խոշոր դեր է խաղացել երկրի քաղաքական ու ռազմական կյանքում։ Ուստի, բոլորովին էլ պատահական չպետք է համարել այն հանգամանքը, որ Գառնիի մասին հիշատակություններ կան ոչ միայն օտար և հայ մատենագիրների մոտ, այլև այնտեղ հայտնաբերված հունարեն արձանագրության մեջ։ Բերդապահ զորքերի պետը, որին վստահված է եղել երկրի այս կամ այն ռազմական կարևոր հանգույցի, ինչպես նաև արքունի գանձերի պաշտպանությունը, պատկանում էր թագավորին շրջապատող ամենահեղինակավոր և ազդեցիկ պաշտոնյաների թվին։

АРМЯНСКОЕ ВОЙСКО ПРИ АРТАШЕСИДАХ

С. М. КРКЯШАРЯН

Резюме

Об армянском войске и его самостоятельных военных действиях имеются достоверные сведения, начиная с царствования Тиграна II. Мовсес Хоренаци приписывает организацию армянских войск полулегендарному царю Вагаршаку (II в.). Однако Тигран II, несомненно, провел большие реформы по реорганизации армянского войска. Главнокомандующим войска являлся сам царь, но проведение той или иной военной кампании он всегда поручал своим полководцам. Основное ядро войска Арташесидов составлял конный отряд телохранителей царя (3000 всадников). В состав отряда входили друзья и приближенные царя.

---

[40] Strabo, XI, 14, 6.
[41] Cass. Dio, LV, 10.
[42] Strabo, XII, 3, 28.